

ԼԵՋՈՒՍԳԻՏԱԿԱՆ

ՀԱՅԵՐԷՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐԸ^(*)

18. Պոլսոյ բարբառ. — Այս բարբառը խօսուում է միայն կոստանդնուպոլիս քաղաքում, որ աշխարհիս ամենահայաշատ քաղաքն էր։ Այս բարբառով զրուած քներ անթիւ են. բայց գեռ չկայ ոչ մի ուսումնասիրութիւն։

Ձայնական զրուածիւնը աղքատ է. պակասում է ան ձայնը, թէև կան իւ և եօ ձայները. չկայ նոյնպէս ե, ե և ո, օ ձայնաւորների տարբերութիւնը։ Երկբարբառներ նոյնպէս պակասում են։ Բաղաձայնների երեք աստիճանները վերածուած են երկուսի. թրթռուն և թաւ. ք, փ, գ, ֆ են։

Սրան հակառակ ձայնական փոփոխութիւններ տեղի ունեցած է են մեծ չափերով, և Պոլսոյ բարբառը թէև հայ երկրից շատ հեռու ընկած մի բարբառ, բայց շատ աւելի հաւատարիմ մնացած է հայ լեզուին, քան նոյնիսկ բուն Հայաստանի բարբառներից շատերը։

Այսպէս է նաև քերականութիւնը, ուր մեծ փոփոխութիւններ չկան. Պոլսի բարբառը արեւմտեան գրական հայերէնի նա-

(*) Շարունակութիւն՝ մեծաճումն հեղինակի «Պատմութիւն Հայ Լեզուի» գործէն (ԻՊ. Գուլիս)։

մեզի կը թուի լաւագոյնս համապատասխանել այս իտէալին։ Եւ մաքրութեամբը, յատկութեամբը պատկերներուն, զորս իր հոգւոյն բիւրեղը կ'արտացոլացնէ անեղծ, ան է', XIXրդ դարու վերջաւորութեան քըննադատներուն մէջ, ա'յն որ աւելի մօտեցած է սա միւս իտէալին՝ անանձնականութեան։ Ատոր համար իրաւունք ունի, իր զոյգերուն մէջ, առաջին տեղին. այդ պատճառաւ ան մեծ է։

ԱՄՓՈՓԾՑ

ՊԱՐԳԵՒ ՏԵՐ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

(Շարունակելի՝ 14)

խատիպն է։ Նորութիւններից մեծագոյնը բայերի անմիջական ձեւի կոր մասնիկն է որ գրական լեզուի մէջ ընդունուած չէ։

19. Ռոտոսթոյի բարբառ. — Պոլսից դէպի արեւմուտք հայերէն լեզուն ջնջուած է. Եւրոպական Թուրքիոյ և Բուլղարիոյ բնիկ հայութիւնը թրքախօս է։ Այս թրքախօս շրջանում բացառութիւն է կազմում Ռոտոսթոյի հայութիւնը, իր հարեւան Մալկարայի հետ միասին, որոնք ներկայացնում են բաւական ստուար բնակչութեամբ հայ գաղութ։

Ռոտոսթոյի բարբառը զրի առնուած չէ. չկայ նրա վրայ որևէ ուսումնասիրութիւն։

Ռոտոսթոյի բարբառը շատ չի տարբերւում Պոլսոյ բարբառից. ձայնական զրուածիւնը նոյն է. բայց կայ մի խոշոր տարբերութիւն ձայնական փոփոխութեանց մէջ. այդ այն է որ մինչդեռ Պոլսի բարբառում ք, գ, փ, ան, ջ բաղաձայնները պահուած են անփոփոխ, այստեղ ընդհակառակը վերածուած են թաւ փ, ֆ, ք, ց, չ։ Այս ձայնափոխութիւնը՝ որ յետոյ անցիւ է նաև Պոլսի գրական արտասանութեան, շատեր վերադարձակ սխալ է։ Պոլսի ռաւիկը հնչում է բէրան, զիբ, դուռ, ջուր, ձմեռ և գրագէտն է միայն որ հնչում է այդ բառերը փէրան, ֆիբ, քուռ, ջուր, ցմեռ ևն։

Քերականութեան մէջ էլ Ռոտոսթոյի բարբառը նման է առհասարակ Պոլսի բարբառին. այստեղ էլ գտնում ենք անմիջական ժամանակի կոր (իմա գոր) մասնիկը, որի դէմ երբեք գտնում ենք զօ կամ օր։ Ապառնին կազմում է բըղը, բըղ, բըղը մասնիկներով, մինչդեռ Պոլսի բարբառը ունի միայն բիղի։

20. Ուրիմի բարբառ. — Այս բարբառը խօսուում էր նախապէս միայն Ուրիմի թերակղզում. 1779 թուի գաղթականութեամբ փոխադրուեց հարաւային Ռուսաստան, ուր հայերը շինեցին Նոր Նախիջեւան քաղաքը, իր շրջակայ 5 գիւղերով։ Այստեղից էլ հայերը տարածուեցան Ռոստով և այլ շրջակայ քաղաքներ։

Այս բարբառով ճօն գրականութիւն կայ. յիշելու արժանի են յատկապէս Գ. Պատկանեանի երկերը, հտ. Ա. և Բ., Պետերբ. 1893, հտ. Գ. Ռոստով 1904, կայ

ընդարձակ և մանրամասն ուսումնասիրութիւն Հ. Աճառեանի, Երեւան 1926, Համալսարանի ապակետիպ:

Ուրիմի կամ որ նոյն է նոր նախնիներէն բարբառը շատ մօտիկ է Պոլսի բարբառին. ձայնական դրութիւնը նոյն է. միայն պակասում է եօ ձայնը: Պոլսի բարբառին նման այստեղ էլ բաղաձայնները ունին երկու աստիճան՝ բ, փ, գ, ֆ են. բայց գիւղերում կան բոլոր երեք աստիճանները՝ բ, բ', փ են:

Քերականութիւնն էլ նման է Պոլսոյ բարբառին. միայն հայցականը Ում ճիւղի նման տրականի հետ նոյն է: Դասական թուականները կազմւում են Ում մասնիկով. ինչպէս՝ էրկուսում, ժէքում, չօրսում են: Անմիջական ձև գոյութիւն չունի բայերի մէջ:

21. Աւստրո-Հունգարիոյ բարբառ. — Լեհաստանի, Բուկովինայի, Տրանսիլվանիայի և Հունգարիայի զանազան կողմերը ցրուած մեծ ու փոքր հայ գաղութները, եթէ հայերէն լեզուն մոռացած չեն, խօսում են մի բարբառ՝ որ յարմար դատեցինք կոչել Աւստրո-Հունգարիոյ բարբառ: Սրանցից Լեհահայ գաւառականը ուսումնասիրել է Հանուշ հայագէտը իր երկու գործերի մէջ. Սիււա լա լանգ դէզ Արմենիէն Պոլոնէ, Ա. մո ըկյօի ա կուտի, Կրակովի 1886 և Բայթրադէ ցուր Արմենիչեն դիոլեկտոլոգի: Սուչավայի բարբառը ուսումնասիրել եմ ինքս՝ Քննութիւն Սուչավայի բարբառի, Բաղմալէպ 1899, կիսատ: Հունգարիայից կան մանր մունր քնագիրներ, բայց առանձին ուսումնասիրութիւն չկայ:

Սուչավայի բարբառը պարունակում է հայերէնի սովորական ձայնաւորները. չուների ա, եօ, իւ. երկբարբառների կողմից շատ հարուստ է. ունի աւ, իւ, օւ իեւ, իը, ե, բայց չկայ ո. ինչպէս՝ ցաւ, բաղիւ, սիւրդ են: Բաղաձայնները ունին երեք աստիճան՝ բ, բ', փ են:

Բարբառը ընդհանրապէս հաւատարիմ է հին հայերէնին և աչքառու ձայնափոխութիւններ չկան:

Քերականութեան մէջ նկատելի երեւոյթները հետեւեալներն են. 1. Հայցականը ստանում է զ նախդիրը. 2. Գործիականը ստանում է օւ մասնիկը. 3. Դասական թուական ածականները կազմւում են

Ում մասնիկով. ինչպէս՝ երգուսում, իրէքում են. 4. Ներկայի և անկատարի մասնիկն է գի. անկատարի եզակի բ գէմքը ներկայի նմանողութեամբ ստանում է ա. ինչպէս՝ գի սիրիմ, գի սիրիւ, գի սիրէի, գի սիրէիս են: 5. Անմիջական ներկայի և անկատարի ձեւեր չկան. 6. Ապառնին կազմւում է բիգօր մասնիկով, իսկ Հունգարիոյ հայերը գործածում են բի, ձայնաւորի մօտ բ. 7. Կատարեալը գործածութիւնից ընկած և նոր եւրոպական լեզուների հետեւողութեամբ փոխանակուած է յարակատարով. ինչպէս՝ սիրիլ իմ փիւ. սիրեցի:

Գ. Ն ճիւղ

Այս ճիւղը ունի 4 բարբառ.

1. Մարաղայի բարբառ. — Խօսւում է Ուրմիոյ լճի երկու երեսները. արեւելեան երեսում գտնւում է Մարաղա քաղաքը, իսկ արեւմտեան երեսում Ուրմիա քաղաքը՝ իր մի խումբ հայ գիւղերով, որոնցից ոմանք թրքախօս են: Բարբառիս վրայ ունիմ ընդարձակ մի ուսումնասիրութիւն՝ Քննութիւն Մարաղայի բարբառի, 1926, Երեւան, Համալսարանի ապակետիպ, ուր կան նաև բաւական քնագրեր:

Ձայնական դրութեամբ բարբառս շատ հարուստ է. ունի 11 ձայնաւոր, 6 երկբարբառ և 34 բաղաձայն, ընդամենը 51 ձայն: Բացի սովորական ձայնաւորներից՝ գտնւում ենք այստեղ ա, եօ, իւ, ինչպէս նաև մի տեսակ փակ ը և մի տեսակ ի: Երկբարբառներն են ըե, ըի, ուե, ուի, ու, օի. — բաղաձայններն են, բացի սովորականներից, գլ, կլ, ֆլ, յն և կիսաձայն լ:

Մարաղայի բարբառը բաւական հեռացած է հին հայերէնի ձայնական օրէնքներից. օրինակ՝ ի յաճախ դառնում է եի, բ (կյարը՝ տըպը՝ իր), ո դառնում է վրի, եօ, ըի, ուե, ուի (կուիրծ, վրիթթը՝ խուէղ, կյիւլէօրէլ են), ոյ դառնում է իւ, ուի (լուիս), հ դառնում է խ (խաց, խավ), թրթռուն բաղաձայնները վերածւում են խուլի են: Ամենից կարեւորը ձայնաւորների ներդաշնակութեան օրէնքն է, որ թուրքերէնի ազդեցութեամբ է առաջացած: Ձայնաւորները բաժանւում են երկու կարգի, ծանր և թեթեւ. ծանր են ա, բ, ը, օ,

ու, թեթեւեւ ա, է, ի, եօ, իւ. սկզբունքն այն է, որ մի բառի բոլոր ձայնաւորներն էլ պիտի պատկանին միեւնոյն կարգին, այսինքն կամ իոլորն էլ պիտի լինին ծանր և կամ բոլորն էլ պիտի լինին թեթեւ. օրինակ գարի, բարի բառերի առաջին ձայնաւորը ծանր է, երկրորդը թեթեւ, ինչ որ ձայնաւորների ներդաշնակութեան օրէնքի համար անկանոնութիւն է. ուստի առաջինն էլ դառնում է ա, օրով յառաջանում է կյարի, պառի, երկուսի ձայնաւորներն էլ թեթեւ։ Այս օրէնքը տիրում է նաև քերականութեան մէջ, ուր ամէն ինչ, յօդ, անուանական ու բայական մասնիկներն ու վերջաւորութիւնները ձեւափոխւում են ձայնաւորների փոխադարձ ազդեցութեամբ։

Յոգնակիւ մասնիկներն են իր, նիւր, բիւր. հոլովման մէջ սղում կամ անկում գոյութիւն չունի. ներգոյական չկայ. բացառականը կազմւում է եւ մասնիկով, իսկ հայցականը ում ձեւով նման է։ Բայի խոնարհումը շատ է փոփոխուած։ Ներկայի բունը կազմւում է բայի անորոշից՝ նրան կցելով կամ հետը խոնարհուելով օժանդակ բայը. օրինակ ներկայի՝ իւզէլ իմ, իւզէլ իս, իւզէլի, իւզէլինք, իւզէլէք, իւզէլին։

Անկատարը կազմւում է ներկայի վրայ աւելացնելով եր մասնիկը՝ առանց դէմքի և թուի խտրութեան. ինչպէս՝ իւզէլիմ էր, իւզէլիս էր, իւզէլէր . . .

Կատարեալի համար հնարուած է նոր ձև. իւզում, իւզիր, իւզից, իւզունք, իւզուք, իւզուն։ Ապառնին կազմւում է սովորական ձեւով և կը մասնիկով. ինչպէս՝ կիւզում, կիւզիս, կիւզու, ևն. անցեալը՝ կիւզում էր, կիւզիս էր, կիւզէր ևն։

2. Ոոյի բարբառ. — Այս բարբառը ընդարձակ տարածութիւն ունի. նա բըռնում է ոչ միայն Ոոյի, Սալմաստի և Մակուի գաւառները Պարսկաստանում, այլ և Արաքսից այս կողմ՝ Իզդիր և Նախիջեան։ 1828-ի Պարսկահայոց զաղթի ժամանակ՝ Սալմաստի և Ոոյի կողմերից շատ հայեր եկան հաստատուեցան Այրարատեան նահանգի զանազան կողմերը, մինչև իսկ Զանգեզուր և Սիսիան։ Քաղաքներում և աւաններում հաստատուած նորեկներից շատերը բնիկների հետ խառնուելով կորցրին

բարբառը, բայց տեղ տեղ էլ երկու բարբառները կողք կողքի մնացին. այսպէս օրինակ Աստապատում կան թէ բուն Աստապատցիք՝ որ խօսում են Երեւանի բարբառի մէկ ենթաբարբառը, և թէ զաղթական Ոոյցիք՝ որ պահել են իրենց բնիկ բարբառը։ Գալով Պարսկահայոց նոր հիւնած զիւղերին, սրանք բնականաբար մինչև այսօր անփոփոխ պահում են իրենց բարբառը, մինչև իսկ Երեւանի շրջակայքում։

Այս բարբառի վրայ յատուկ ուսումնասիրութիւն չկայ. բայց կան մի քանի մանր գրութիւններ. մեծագոյններն են Ն. Տէր-Աւետիքեանի Ոտանաւոր աշխատութիւններ և Նշանադրութիւն Պարսկաստանից զաղթած Ոոյեցեաց բարբառով, Վաղարշապատ 1900 և Բանաստեղծութիւններ և Կիրակոսի Հարսանիքը, Վաղարշապատ 1903։

Այս գրուածքներից երեւում է որ Ոոյի բարբառը բռնում է միջին դիրք Մարաղայի և Վանի բարբառների միջև. քերականական կազմութիւնը նման է Մարաղայի բարբառին, իսկ ձայնական օրէնքները Վանայ բարբառին. ուրիշ խօսքով Ոոյի բարբառը Մարաղայի բարբառից մի քիչ աւելի մօտիկ է գրական լեզուին։

3. Արդուինի բարբառ. — Այս բարբառը խօսւում է Արդուին քաղաքում, մօտակայ Արտանուշ աւանում, թերեւս նաև Արտահանում, Օլթիում և սրանց մօտակայ Յ հայաբնակ զիւղերում։ Բարբառիս վրայ ոչ մի ուսումնասիրութիւն չկայ, ոչ էլ բնագիրներ կան հրատարակուած։

Արդուինի բարբառի ձայնական գրութիւնը նման է Թիֆլիսի բարբառի. բաղաձայնների երեք աստիճանները անվթար պահուած են. հոլովման մէջ բացառականը կազմւում է մեկ մասնիկով, ներգոյականը ում, յոգնակի սեռականը երու. այս բոլորը ճիշտ Թիֆլիսի բարբառին նման են։

խոնարհումը սակայն տարբեր ձեւով է. ներկան կազմելու համար առնում են բայի անորոշը, աւելացնում են իս մասնիկը և խոնարհում օժանդակ բայով. ինչպէս՝ խօսելիս էմ, էրթիս էս, փնտռելիս է, ևն. կարելի է նաև վերջածայն ս կըրճատել, յատկապէս երբ օժանդակը առաջ է անցնում. ինչպէս՝ ընէլի է, վո՞րտի էս էրթի, չեմ կայի խօսելի ևն։

Առանձնապէս հետաքրքրական է հրամայականի մի ձեւը. ինչպէս՝ գրիս ա, խօսիս ա ևն:

4. Հաւարիկի բարբառ. — Խօսուում է կուր զետի ձախ աիին՝ Արէշ գաւառի 6 հայաբնակ գիւղերում, որոնցից կարեւորը Հաւարիկ գիւղն է: Այս բարբառի վրայ մանրամասն մի ուսումնասիրութիւն ունի Գր. Տէր Պօղոսեան, որի մի համառօտութիւնը հրատարակուած է Հայաստանի Գիտական Ինստիտուտի Բանբեր ժողովածուի մէջ, էջ 160-177, նմոյշներով միասին:

Բարբառս շատ կէտերով նման է Ղարաբաղի, Զուղայի և Շամախու բարբառներին, բայց իր քերականական կազմութեամբ անջատուում է բոլորից:

Գլխաւոր յատկանիշներն են.

1. Սահմանական ներկայի և անկատարի երկու տեսակները, որոնք կազմում են անորոշ գերբայից. ինչպէս՝ գիրէլիս ըմ, խինդալիս ըմ, գիրէլւմ ըս, խինդալւմ ըս, գիրէլիւմ ի, խինդալիւմ ի ևն. — գնալօ յըմ, գնալօ յըս, գնալօ յի ևն. — գնալւմ էյի, գնալւմ էիր, գնալօ էյի, գնալօ էիր ևն:

2. Ապառնիի համար կը ձեւը չկայ, այլ դերբայական ձեւ միայն. ինչպէս՝ գնալա յըմ, գնալա էի ևն, գնալացուկ ում, գնալացուկ էյի ևն, գլանական ըմ, գնալական էյի:

3. Ստորադասականը կազմուում է միայն անորոշով. ինչպէս՝ գնալ ըմ, գնալ ըս, գնալ էի, գնալ էիր ևն:

ՊՐՈՖ. Հ. ԱՃԱՌԵԱՆ



Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ՇՆՈՐՀԱՒՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Ս. Զատիկի օգին առբիւ հետեւեալ ընդհանուրական հեռագիրը ստացուած է Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետէն, ուղղուած Գեր. Տեղապան Հօր:

Գեր. Տ. եղիշէ Վրդ. Տէրութեան

Տեղապահ Ս. Աթոռոյ

երուսաղէմ

Սիրոյ ողջոյններով կը շնորհաւորենք մեր Փրկչին Ս. Յարութեան տօնը: Ազօթենք որ յարուցեալ Փրկիչը աշխարհին շնորհէ իր խաղաղութիւնը որ հիմն է ճշմարիտ քաղաքակրթութեան եւ աղբիւր՝ մարդկային կեանքի երջանկութեան:

Սիրով եւ օրհնութեամբ

ԳԷՈՐԳ. Զ. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Ամենայն Հայոց

15 Ապրիլ 1950

Իսկ 6 Ապրիլ 1950ին, Գեր. Տեղապան Հայրը հետեւեալ ընդհանուրական հեռագիրը ուղկած է Ամենայն Հայոց Հայրապետ Վեհ. Տ. Տ. Գեորգ Մբազմագոյն կաթողիկոսին:

Նորին Ս. Օծութիւն Վեհ. Տ. Տ. Դէորդ

Ս. Կաթողիկոս Ամենայն Հայոց

Էջմիածին, Երեւան

Ի դիմաց Ս. Յակոբեանց Միաբանութեան եւ համայն պաղեստինահայութեան կը ներկայացնենք Ս. Զատիկի տօնին առթիւ մեր բարեմաղթութիւնները, Զերդ Ս. Օծութեան երջանիկ եւ երկար կեանք եւ բարգաւաճութիւն ու հաստատութիւն մեր Ս. Եկեղեցիին, Հայրենիքին եւ մեր սիրեցեալ ժողովուրդին:

ԵՂԻՇԷ ՎՐԴ. ՏԷՐՏԷՐԵԱՆ

Տեղապահ Առաք. Ս. Աթոռոյ